«ՋԻ ԹԻ ԲԻ ՍՔԻԼ» ՍՊԸ

նախատեսվող 110ԿՎ ՕԳ-ի (օդային գիծ) և 25000ԿՎԱ 110/10/0.4ԿՎ ենթակայանի կառուցման գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող «ՋԻ ԹԻ ԲԻ ՍՔԻԼ» ՍՊԸ՝

տնօրեն Ա. Արորա

«Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ՝

տնօրեն Հ. Նիկողոսյան

Երևան 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ....3
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ....6
2.1 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը....6
2.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը....6
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....8
3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները....8
3.1.1. Երկրաբանական կառուցվածք, Ռելիեֆ....8
3.1.2. Տեկտոնիկա, սեյսմիկություն....9
3.1.3. Սողանքներ....10
3.2. Կլիմա և օդային ավազան....11
3. 3. Հողային ռեսուրսներ....14
3.4. Ջրային ռեսուրսներ....15
3.4.1. Գրունտային ջրեր....17
3.5. Կենսաբազմազանություն....18
3.6. Պատմության եվ մշակութային հուշարձաններ....18
4. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ....18
5. ՍԱՆԻՏԱՐԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻ....19
6. Շինարարության փուլ....20
6.1 Ազդեցությունը մթնոլորտաի վրա....20
6.1.1 Մթնոլորտի աղտոտվածության սպասվելիք մակարդակները շինարարության ժամանակահատվածում....26
6.1.2. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները....27
6.1.3. Տնտեսական վնասը....27
6.2. Ջրապահանջը շինարարության ժամանակ....29
6.3 Հողային աշխատանքներ. 30
6.4. Շինարարության փուլում առաջացած թափոնները....31
6.5. Բնապահպանական միջոցառումներ շինարարական փուլում....31
Մոնիտորիգ և բնապահպանական կառավարման պլան շինաշխատանքների ժամանակահատվածում....32
7.Շահագործման փուլ....33
8.Հակավթարային միջոցառումներ....33
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....34
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....35

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) – կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006թ.) - Կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և

մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածությանաստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման

վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն։

«ՀՀ Ջրային օրենսգիրք» (ՀՕ-373, 04.06.2002թ.) - կարգավորում է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-159-Ն 24.11.2004թ.) - կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

ՀՀ կառավարության որոշումներ

- **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում**՝«Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում**՝«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում**՝«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում**՝«ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում**՝«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:

- **ՀՀ կառավարության 08.11.2011թ. N1396 որոշում**՝«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին»:
- **ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում**՝«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»:
- **ՀՀ կառավարության 25 հուլիսի 2019 թվականի N 947-Ն որոշում**՝«ՀՀ կառավարության 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 927-Ն ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 205-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
- **ՀՀ Կառավարության 2 ապրիլի 2009 թվականի N363-Ն որոշում**՝ «Էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին»

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ջի Թի Բի Սթիլ »ՍՊԸ–ն նախատեսում է Արարատի մարզ, գ. Երասխում կառուցել 110ԿՎ ՕԳ (օդային գիծ) և 25000ԿՎԱ 110/10/0.4ԿՎ ենթակայան ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից տրված NՏՊ-330-110/0349 12.08.2022թ. ''Բաշխման ցանցին միացման էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի'' համաձայն: Ենթակայանի տարածքի հատակագիծը WGS-84 (ARMREF 02) կոորդինատային տվյալներով ներկայացված է Հավելված 5-ում:

2.1 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

«Ջի Թի Բի Սթիլ» ՍՊԸ–ն նախատեսում է ենթակայանի կառուցում՝ գ. Երասխի տարածքում՝ գյուղի կարիքները ապահովելու և ինֆրակառուցվածքների զարգացման նպատակով: Ենթակայանն ունենալու է 110կՎ ՕԳ:

Հայաստանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ Օրենք) համաձայն:

Համաձայն Օրենքի՝ փորձաքննության ենթակա է օդային գծերի (ՕԳ) կառուցումը՝ 110 և ավել հզորության: Օդային գծի կառուցումը ենթակա է փորձաքննության ՝«Բ» կատեգորիայի ընթացակարգով: Հետևաբար, նախատեսվող գործունեությունը դասվում է «Բ» կատեգորիայի՝ համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի գ. ենթակետի:

ՕԳ անցկացման համար առկա են անհրաժեշտ համաձայնությունները համապատասխան լիազոր մարմիններից և տարածքի սեփականատերերից՝ հավելված 2. :

2.2 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Արարատի մարզի Երասխ գյուղում նախատեսվում է կառուցել 110/10կՎ ենթակայան, որի հզորությունը կազմելու է 1x25.0կՎԱ, սնումն իրականացվելու է 110կՎ “Երասխ 2” ՕԳ-ի N49 միջանկյալ հենարանից՝ ճյուղավորման սխեմայով: Աշխատանքային նախագծի մեջ ներառված են 110կՎ տրանսֆորմատորային ենթակայանը, ԵԿ-ի հողանցման համակարգերը:

«Երասխ-2» ԵԿ-ի 110կՎ ԲԲՍ-ում նախատեսվում է տեղադրել 110/10կՎ լարման եռաֆազ երկփաթույթ ТДН-25000/110 մակնիշի ուժային տրանսֆորմատոր:

Էլեկտրակայանի սեփական կարիքների սնման համար տեղադրվում է 10/0.4կՎ 25կՎՍ հզորության Т-25կՎՍ, 10/0.4կՎ մակնիշի ուժային տրանսֆորմատոր: Տրանսֆորմատորի սնումը իրականացվում է ուժային տրանսֆորմատորի 10կՎ մուտքից: Սեփական կարիքների վահանից սնվում են ենթակայանի ղեկավարման, պաշտպանության ողջ օպերատիվ շղթաները:

Նախատեսվող միաշղթա 110կՎ ՕԳ-ի ուղեգծի երկարությունը՝ կառուցվող 110/10կՎ ենթակայանի մուտքի պորտալից մինչև ճյուղավորման համար նախատեսված հենարանը կազմում է 390մետր: Ուղեգիծն անցնում է ծիրանի այգով, որտեղ ծառերի բարձրությունը 3-5մետր է: Նախատեսված է 2 հատ խարխսաանկյունային հենարանի տեղադրում: Ծառերի վրա գաբարիտի ապահովման և հենարանների փոքր բազա ապահովելու համար, նախատեսված են 2 հատ երկշղթա, խարխսաանկյունային հեներան: Ներքևի հաղորդալարերի ամրացման բարձրությունը հենարանների վրա կազմում է 19.5մ: Հենարանների սխեման և ուղեգծում տեղադրման դիրքները տրված են Հավելված 3-ում:

Հենարանների տակ նախատեսված են տիպարային երկաթբետոնե հիմքեր, որոնց ընտրությունը կատարված է ըստ հենարանների վրա ազդող ուժերի և գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների: Հիմքերի տակ նախատեսվում է խճի նախապատրաստական շերտ՝ 100մմ: Հիմքերի տեղադրումից հետո գրունտի հետլիցքը պետք է կատարվի տոփանումով՝ յուրաքանչյուր 20սմ հետլիցքից հետո:

Յուրաքանչյուր հենարանի տակ նախատեսվում է 50մ^2 տարածք, իսկ նախագծով նախատեսվում է ենթակայան 500մ^2 հարթակի վրա (ընդհանուր՝ 600մ^2):

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզի Երասխ համայնքում: Ենթակայանի կառուցման տարածքում առկա են ծիրանի ծառեր, սակայն որևէ ծառի հատում չի նախատեսվում: Երասխ համայնքը գտնվում է Արարատի մարզում: Մարզկենտրոն Արտաշատ քաղաքից հեռու է 36 կմ դեպի հարավ-արևելք, մայրաքաղաք Երևանից՝ 60 կմ դեպի հարավ և ծովի մակարդակից է 810մ բարձրության վրա :

3.1.1. Երկրաբանական կառուցվածք, Ռելիեֆ

Երկրաբանական տեսակետից շրջանը կազմված է վերին պլիոցեն-պլեյստոցենի հասակի լճային, գետային, հեղեղային նստվածքներով [1]: Նստվածքների ստվարաշերտը իր հերթին ծածկված է չորրորդական հասակի ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով: Այս նստվածքները զարգացած են գոգահովիտներում, Արաքս գետի հովտում և ներկայացված են մագմայական և նստվածքային ապարների կոպտագլանված բեկորներով, ինչպես նաև կավերով, կավավազով, ավազներով: Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների հզորությունը տատանվում է 5մ-ից մինչև 30մ-ը: Ռեգիոնի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են 500մ ընդհանուր հզորությամբ լճագետային և հրաբխածին գոյացումների համալիրները, որոնք տեղադրված են ծալքավոր ջրահեստ հիմքի վրա, և ներկայացված են պալեոզոյի և մեզո-կայնոզոյի ավազակավային և կարբոնատային ապարներով: Երկրաձաբանական տեսակետից տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասը կազմող հարթավայր: Բարձրությունը տատանվում է 800-1000մ-ի սահմաններում, բուն տեղամասի տարածքը՝ 800-900մ: Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգածալքային-գրաբենային բարդ կառուցվածք՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էռոզիոն մասնատման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգովարություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել է Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները: Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է

սահմանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների:



Նկար 1. Տարածաշրջանն ըստ բարձրության

3.1.2. Տեկտոնիկա, սեյսմիկություն

Համաձայն ՀՀՇՆ 20.04 - «**ՀՀՇՆ 20.04-«ԵՐԿՐԱՇԱՐԺԱԴԻՄԱՑԿՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ»**»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ Երասխ համայնքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են A=0.3g և ունի 8-9 բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան: Նկար 2.:

Նկար 2. Սեյսմիկ գոտիներ

3.1.3. Սողանքներ

ՀՀ սողանքային աղետի կառավարման ծրագրի համաձայն՝ Ճապոնիայի միջազգային համագործակցության ծրագիր, 2017թ. օգոստոս, Երասխ համայնքում բացակայում են սողանքները:



Նկար 3. Սողանքներ

3.2. Կլիմա և օդային ավազան

Շրջանի կլիման, որտեղ գտնվում է նախագծվող տեղամասը, չոր է, խիստ ցամաքային: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300 մմ է: Շրջանի կլիմայական բնութագրերը բերված են 3.2.1-3.2.3 աղյուսակներում՝ ըստ ամենամոտիկ գտնվող Երասխի և Արարատի դիտակայանի (1262մ ծ.մ.) տվյալների (ՀՀՇՆ II-7.01-2011 համաձայն):

Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների բերված են 2.1 աղյուսակում: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում է -28°C, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ +42°C:

Ջերմաստիճանը

Օդի բնութագրիչ ջերմաստիճանները, °C

Աղյուսակ 3.2.1.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի	ըստ ամիսների												Միջին տարեկան	Բացարձակ առավելագույն	Բացարձակ նվազագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Երասխ	-3.4	-0.5	6.4	13.5	18.2	22.6	26.6	26.1	21.4	13.9	6.6	-0.3	12.6	-28	42

Օդի հարաբերական խոնավություն, %

Աղյուսակ 3.2.2.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	ըստ ամիսների												Միջին տարեկան %	Միջին ամսական	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		Ամենացուրտ ամիս	Ամենաշոգ ամիս

Երասխ	-	-	-	57	55	48	46	44	48	60	-	-	-	-

Ձյան ծածկույթ

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3.2.3.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը ըստ ամիսների												Տարեկան	Ձնածածկույթ		
														Առավելագույն տանօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն պաշար, մմ
1	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երասխ	19	18	27	30	36	23	9	6	8	20	24	18	238	-	-	-
	21	23	26	30	32	29	28	32	24	28	28	22	32			



Նկար 4. Միջին տեղումների արժեքն ըստ գետավազանների

Քամիներ

ՀՀՇՆ II-7.01-2011 Շինարարական կլիմայաբանության տվյալների համաձայն Երասխ համայնքի քամիների, արևափայլի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ըստ Արարատի օդերևութաբանական կայանի տվյալների:

Քամի

Աղյուսակ 3.2.4.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (hՊա)	Ամիսներ	Կրկնելիությունն ըստ ուղղությունների								Անձող մությունների հաճախականություն, %	Միջին ամսա կան արագությունը, մ/վրկ	Միջին տարեկ ան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի միջին թվաքանակը, տարվա տարբեր ամիսներին			Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱ)	Արևելյան (Ա)	Հարավարևելյան (ՀվԱ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱ)	Արևմտյան (Ա)	Հյուսիսարևմտյան (ՀսԱ)					25	50	100
Արարատ	921.6	հունվար	6	3	8	18	10	5	11	29	50	1.3	1.9	18	25	27	29
			1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2							
		ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3					
			2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8							
		հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3					
			2.6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0							
		հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5					
			2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5							

<u>Մթնոլորտային բնութագիրը</u>

Արևափայլի տևողությունը

Աղյուսակ 3.2.5.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունն ըստ ամիսների, ժամ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Արարատ	123	147	175	168	312	357	422	378	34	263	175	114	2968

Անարև օրերի քանակը

Աղյուսակ 3.2.6.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Ըստ ամիսների, ժամ												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	

Արարատ	9	6	3	2	1	-	-	-	-	1	2	8	32

Տարածքի մթնոլորտային օդի ֆոնային ցուցանիշները

Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիան ներկայացվում է հիմք ընդունելով նշված բնակավայրերի (մինչև 10,0 հազ. բնակիչ) ֆոնային աղտոտվածությունը:

Հայէկոմոնիտորինգ ձեռնարկ-ուղեցույցի համաձայն մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են:

- Փոշի՝ 0.2 մգ/մ^3,
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ^3,
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ^3,
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ^3:

3. 3. Հողային ռեսուրսներ

Երասխ համայնքի հողերը գորշ կիսաանապատային հողեր են: Կիսաանապատային գորշ հողերը ձևավորվել են տեղակուտակ, տեղակուտակ-ողողաբերուկային խճային և խճաբեկորային կարբոնատային մայրատեսակների վրա: Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, բավականաչափ կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշե-հատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 30-35%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են Ca So4, MgSO4 և այլ աղեր:[2]



Նկար 5. Հողերի տեսակների քարտեզ

3.4. Ջրային ռեսուրսներ

Շրջանին մոտիկ խոշոր ջրային արտերիան Արաքս գետն է՝ իր Վեդի վտակով: Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակ լեռնազանգվածում, և միջին հոսանքում, 120կմ երկարությամբ հոսում է Թուրքիայի հետ պետական սահմանով: Արաքս գետի ավազանը ընդգրկում է Հայաստանի տարածքի 73.5% և հանդիսանում է ջրընդունիչ հարավային շրջանի բոլոր գետերի համար: Գետի սնուցումը խառն է: Գարնանը, կապված ձնհալքի և առատ անձրևների հետ, տեղի են ունենում բուռն վարարումներ: Արաքսը ջրառատ գետ է, ջրի մաքսիմալ ծախսը դիտվում է մայիս-հունիս ամիսներին և հասնում է 550մ^3/վ, նվազագույնը՝ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Արաքս գետի ջրերը բավականին պղտոր են [3]:

Հայաստանի տարածքով հոսող նախատեվող գործարանին ամենամոտը Վեդի գետն է որը գտնվում 7,2կմ հեռավորության վրա: Վեդի գետի ընդհանուր երկարությունը 58կմ է, հոսքի տարեկան ծավալը ներքին հոսանքում 61.8մլն.մ^3 է, միջին ելքը՝ 2.23 մ^3/վրկ: Ամռանը գետը գրեթե չորանում է, ջրի խապսը ներքին հոսանքում հասնում է միայն մոտ 0.37 մ^3/վրկ: Գետը հիմնականում սնվում է աղբյուրների հզոր խմբից և, մասամբ, ձնհալքի հաշվին:

Վեդի գետի ավազանում Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից հիդրոլոգիական դիտարկումները իրականացվում են Ուրցաձոր բնակավայրում (նկար 6): Գետի Ուրցաձոր գետահատվածի համար տվյալները բերված են 3.4.1-3.4.4 աղյուսակներում:

Վեդի գետի հիդրոլոգիական բնութագիրը

Աղյուսակ 3.4.1.

Գետ	Երկարությունը, կմ	Ջրհավաք ավազանի մակերեսը, մ2	Հոսքի մոդուլը, լ/վ կմ2	Հոսքի շերտը, մմ
Վեդի-Ուրցաձոր	30	360	4.62	146

Վեդի գետի հիդրոգրաֆիական բնութագրիչներ

Աղյուսակ 3.4.2

Գետ	Հունի գերակշիռ լայնությունը, մ	Հունի միջին խորությունը, մ	Միջին արագությունը, մ/վ	Տարեկան միջին ջերմաստիճանը, 0C
Վեդի-Ուրցաձոր	8.2	0.28	0.60	7.4

Հիդրոլոգիական բնութագրիչներ

Աղյուսակ 3.4.3

Գետ-դիտակետ	Տարեկան բազմամյա միջին ելք, մ3/վ	Հոսքի ծավալը, մլն.մ3	Առավել ագույն ելքը, մ3/վ	Բացարձակ նվազագույն ելքը, մ3/վ	Ելքը 95% ապահովվ. դեպքում	
					Միջին ելքը, մ3/վ	Նվազագույն ելքը, մ3/վ
Վեդի-Ուրցաձոր	1.61	50.8	53.8	0.01	1.45	0.02

Վեդի գետի միջին հոսքի բաշխումը տարեկան կտրվածքով (Ուրծաձոր դիտակետ)

Աղյուսակ 3.4.4

Տարեկան բազմամյա միջին ելք, մ3/վ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Միջին	0.68	0.77	1.20	4.37	7.55	2.47	0.61	0.30	0.26	0.48	0.65	0.62
Նվազագույն	0.17	0.22	0.27	0.65	1.08	0.15	0.06	0.03	0.03	0.05	0.07	0.10
Առավելագույն	1.28	1.35	2.38	3.08	16.6	8.29	2.23	1.38	1.16	0.81	1.71	1.23



Նկար 6. Արարատի տարածաշրջանի քարտեզ-սխեմա

3.4.1. Գրունտային ջրեր

Ստորգետնյա ջրերի երկրաքիմիական ռեժիմը կայուն չէ, ջրերի ընդհանուր հանքայնացումը տատանվում է լայն սահմաններում՝ ըստ սեզոնայնության: Այդպիսի երևույթները բնորոշ են ստորգետնյա ջրերի այն հորիզոնների համար, որոնք ճնշումային ենթահորիզոնների ջրերից բացի սնուցվում են նաև մակերևութային և ոռոգման ջրերով: Գրունտային ջրերի հանքայնացման վրա որոշ ազդեցություն է գործում հողից գոլորշիացման աստիճանը: Ստորգետնյա ջրերի ջրաքաշումը ուղղված է դեպի Արաքս գետը:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ստորերկյա ջրերը: Իսկ ամենամոտ ջրագրական միավորը Վեդի գետն է, որից ունեցած հեռավորությունը ավելի քան 20կմ է:

3.5. Կենսաբազմազանություն

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Երասխավան բնակավայրի պտղատու այգիների տարածքում: Անթրոպոգեն ազդեցության արդյունքում այստեղ բացակայում են կենդանիները, իսկ նախատեսվող գործունեությունը գոյություն ունեցող ծառերի վրա որևէ կերպ չի ազդի:

3.6. Պատմության եվ մշակութային հուշարձաններ

Արարատի մարզի Երասխ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը ներկայացվում է ստորև, որը 2002թ. հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 1 հուշարձան (1 միավոր):

հուշարձան	կառուցվածք	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Մուտք Արարատի շրջանի (ՀՀ Հարավ-արևմտյան դարպասը)	1969 թ.		—	3.42/	S	քանդ.-ներ՝ Ռ. Մնացականյան Ա. Պողոսյան, ճարտ.՝ Ռազմիկ Ալավերդյան

Ենթակայանի տարածքին ամենամոտը ՀՀ հարավ-արևմտյան դարպասն է, որից ունեցած հեռավորությունը ավելի քան 5կմ է:

4. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Արարատի մարզի Երասխ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ այգեգործությամբ և անասնապահությամբ։

Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում է շուրջ 1920 հա։ Համայնքի հողերի հիմնական մասը՝ շուրջ 492 հա, օգտագործվում են որպես վարելահողեր։ Գյուղում առկա է 55 հա պտղատու և խաղողի այգիներ։ Մշակում են ջերմասեր բանջարաբոստանային մշակաբույսեր։ Համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը։ Պահուստային հողերը օգտագործում են հիմնականում որպես արոտավայրեր, որոնք կազմում են 63 հա։ Բնակչությունը զբաղվում է նաև կաթնամսատու անասնապահությամբ և մեղվաբուծությամբ։ 2017թ. դրությամբ համայնքի մշտական բնակչությունը՝ 912 մարդ, առկա բնակչությունը՝ 775 մարդ։ Մշտական աշխատանք ունեցողների թիվը՝ 70 մարդ, աշխատանք չունեցողների թիվը՝ 200 մարդ, որից գործազուրկ են 182 բնակիչ։ Համայնքում կենսաթոշակառուների թիվը՝ 75, նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 60 [4]։

Գյուղն ունի առկա 210 տնտեսություն։ Ունի դպրոց, բուժկետ, կապի հանգույց, գրադարան։

2010 թ-ից համայնքն ունի շուրջօրյա խմելու ջուր։ ՈՒնի ջրհան կայան, որի շնորհիվ ոռոգումվում է շրջակա տարածքների հողահանդակները։ Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ոռոգման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարների վերանորոգումը, մսուր-մանկապարտեզի, գյուղապետարանի շենքի կառուցումը։

Շինարարական աշխատանքներին ներգրավելու են 11 մարդ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով։ Ներգրավվելու են գյուղի բնակիչները։

5. ՍԱՆԻՏԱՐԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԳՈՏԻ

ՀՀ Կառավարության 2009թվականի ապրիլի 2-ի N363-Ն որոշման համաձայն 1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի համար, մասնավորապես 110կՎ լարման

դեպքում սահմանվում է անվտանգության գոտի՝ 20 մետր հաղորդալարի երկարությամբ երկու կողմից:

6. Շինարարության փուլ

Հաղորդալարերի և տրասֆորմատորային ենթակայանի կառուցման աշխատանքները տևելու են 7 ամիս: Շինարարական աշխատանքները կատարվելու են մեկ հերթափոխով ժամը 9.00-18.00 շաբաթը 6 օր: Երեք շինհրապարակներում աշխատելու են 10 բանվոր և 1 ԻՏԱ , ընդ որում՝ ամրանների կառուցման յուրաքանչյուր հրապարակում 3 մարդ և ենթակայանում 4-մարդ:

Շինարարության տարբեր փուլերում շահագործվելու է տարբեր տեսակի շինտեխնիկա:

Հողայի աշխատանքներ՝ հիմքի փորում, գրունտի տեղափոխում, հետլիցք, տարածքի հարթեցում: Փոքր շինհրապարակներում և տնտեսական, և բնապահպանական տեսանկյունից նախընտրելի է շահագործել փոքրագաբարիտ «Հիտաչի» ֆիմաների էքսկավատոր հետադարձ 0,14-0,16մ^3 շերեփով, D39 FX-22 բուլդոզեր, կամ նմատիպ փոքր գաբարիտներով տեխնիկա: Հողային աշխատանքների տևողությունը՝ 45-50օր:

Ենթակայանի շինհրապարակում տեղադրվելու է մեկ շարժական տնակ և բիոզուգարան:

6.1 Ազդեցությունը մթնոլորտայի վրա

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտային օդի վրա ազդեցության հիմնական աղբյուրներն են հանդիսանում՝

- Հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները;
- Շինարարական տեխնիկայի, ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ ծխագազերի արտանետումները;
- Տարածքի բարեկարգման ժամանակահատվածում փոշու արտանետումներ:

Արտանետման աղբյուրները կազմակերպված չեն:

Ելակետային տվյալներ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների և սարքերի ցանկը բերված է աղյուսակ 6.1-ում

Շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների և սարքերի ցանկը

Աղյուսակ 6.1

№ հ/հ	Անվանումը	Քանակը, հատ
1.	Էքսկավատոր՝«Հիտաչի» շերեփի ծավալը 0.14-0.16մ³	1
2.	Բուլդոզեր D39 Fx-22	1
3.	Ինքնաթափ մեքենա”Կամազ”	1

Շինարարության Ժամանակ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը կատարված է գործող մեթոդակարգերի համաձայն և բերված է աղյուսակ 6.2÷6.5-ում /5.6.7/:

Շինարարության Ժամանակ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը բերված է ամփոփիչ 6.6 աղյուսակում:

Ինչպես երևում է 6.6 աղյուսակից, շինարարության Ժամանակ մթնոլորտ է արտանետվում 0.8194 տ վնասակար նյութեր, հիմնականում 3÷4 վտանգավորության դասի:

Շինարարության ժամանակահատվածում արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը

Աղյուսակ 6.2

Ցուցանիշի անվանումը	Հանույթի և բեռնվող նյութերի քանակը G, տ	Ֆրակցիայի բաժնեմասը P1	Ակոզոլի փոխանցվող փոշու բաժնեմասը P2	Տրանքի կիսվայական պայմանները հաշվի առնող գործակից P3	Նյութի խոնավությունը հաշվի առնող գործակից P4	Նյութի խոշորությունը հաշվի առնող գործակիցP5	Տեղամքի պայմանները հաշվի առնող գործակից P6	Թափման բարձրությունը հաշվի առնող գործակից B	Փոշու արտանետումների հաշվման բանաձևը տ/շին ժամ A=G.P1.P2. P3.P4. P5.P6.B
1.Գրունտի հանման-բեռնման գործակից	2078	0,04	0,01	1	0,7	0,5	1	0,5	0.145
2. գրունտի հետլիցք	920	0,04	0,01	1	0,7	0,5	1	0,5	0.064
3.Ենթակայանի տարածքի հարթեցում և կանաչապատում	1158	0,04	0,01	1	0,7	0,5	1	0,5	0.081
ԸՆԴԱՄԵՆԸ									0.29

Կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվելու ենք ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

Փոշու արտանետումների հաշվարկը էքսկավատորի աշխատանքի ժամանակ

Աղյուսակ6.3

Ցուցանիշի անվանումը	Նշանա-կումը	Չափման միավորը	Բանաձևը	Մեծությունը
1	2	3	4	5
1. Գրունտի խոնավությունը հաշվի առնող գործակից	K_2		Մեթոդակարգ	1.2
2. Քամու արագությունը հաշվի առնող գործակից	K_1		Մեթոդակարգ	1.0
3. Էքսկավացիայի (փորում) գործակից	K_3		Մեթոդակարգ	0.7
4. Էքսկավատորի շերեփի տարողությունը	E	մ^3	Մեթոդակարգ	0.15
5. Փոշու տեսակարար արտանետումը բեռնվող գրունտից	q	գ/մ^3	Մեթոդակարգ	6.3
6. Էքսկավատորի աշխատանքային ռեժիմը	T	ժամ/շին.ժամ	Նախագծային տվյալներ	135
7. Էքսկավատորի ցիկլի ժամանակը	t	վրկ	Նախագծային տվյալներ	32
8. Մթնոլորտ արտանետվող փոշու քանակը	m	գ/վրկ	$m=\frac{q\cdot E\cdot K_1\cdot K_2\cdot K_3}{t}$	0.014
		տ/ շին.ժամ	$m=q\cdot(3.6\cdot E\cdot K_3/t)\cdot T\cdot K_1\cdot K_2\cdot 10^{-3}$	0.012

Փոշու արտանետումների հաշվարկը բուլդոզերի աշխատանքի ժամանակ

Աղյուսակ 6.4.

Ցուցանիշի անվանումը	Նշանա-կումը	Չափման միավորը	Բանաձևը	Մեծությունը
1	2	3	4	5
1. Փոշու տեսակարար արտանետումը 1տ տեղափոխվող գրունտից	q	գ/տ	Մեթոդակարգ	1.23
2. Բուլդոզերի մաքուր աշխատաժամերի քանակը մեկ հերթափոխում	t_3	ժամ	Նախագծային տվյալներ	3
3. Տեղափոխվող գրունտի ծավալը	V	$մ^3$	Նախագծային տվյալներ	0.7
4. մեկ ցիկլի ժամանակը	t_1	վրկ	Նախագծային տվյալներ	450
5. Տարեկան հերթափոխի թիվը	$n_հ$	հերթ/ շին.ժամ	Նախագծային տվյալներ	45
6. Քամու արագությունը հաշվի առնող գործակից	K_1		Մեթոդակարգ	1.0
7. Նյութի խոնավությունը հաշվի առնող գործակից	K_2		Մեթոդակարգ	1.2
8. Փխրեցման գործակից	$K_փ$		Նախագծային տվյալներ	1.35
9. Փխրեցվող գրունտների զագվածի մոտավոր ծավալային կշիռը	d	$տ/մ^3$	Նախագծային տվյալներ	2.0
10. Բուլդոզերների քանակը	$n_բ$	հատ	Նախագծային տվյալներ	1
11.Մթնոլորտ արտանետվող փոշու քանակը	m	տ/ շին.ժամ	$m= n_բ \cdot q \cdot 3.6 \cdot d \cdot V \cdot t_3 \cdot n_հ \cdot 10^{-3} \cdot K_1 \cdot K_2 / t_1 \cdot K_փ$	0.00165
	m_1	գ/վրկ	$m_1 = m \cdot 10^6/300 \cdot 3 \cdot 3600$	0.0034

Շինարարական տեխնիկայից և ավտոմեքենաներից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը

Աղյուսակ 6.5

Ցուցանիշի անվանումը	Մթնոլորտ արտանետման տեսակարար նորման տ/տ	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը շինարարության ժամանակահատվածում, տ
Դիզելային վառելիքի գումարային ծախսը,տ	-	2.5
Մթնոլորտ արտանետումներ		
1. Ածխածնի օքսիդ	0,1	0.25
2. Ածխաջրածիններ	0,03	0.075
3. Ազոտի օքսիդներ	0,04	0.1
4.Մուր	0,0155	0.039
5.Ծծմբային անհիդրիդ	0,02	0.05
6© Բենզ¥ա¤պիրեն	0,32գ/տ	$0.8 \cdot 10^{-6}$
ԸՆԴԱՄԵՆԸ		0.514

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը

Աղյուսակ 6.6

Աշխատանքների անվանումը	Վնասակար նյութերի անվանումը և քանակը, տ/շինարարության ժամանակահատված							Ընդամենը տ/շին.ժամ
	Փոշի	Ածխաջրած իներ	Ծծմբային անհիդրիդ	Ածխածնի օքսիդ	Ազոտի օքսիդներ	Մուր	Բենզ(ա)պի րեն	
1.Հողային աշխատանքներ (հանում)	0.145							0,145
2. Հողային աշխատանքներ (հետլիցք)	0,064							0,064
3. Տարածքի հարթեցում և կանաչապատում	0,081							0.081
4. Շինարարական տեխնիկայի և ավտոմեքենաների աշխատանքներ		0,075	0,05	0,25	0,1	0,039	$0.8 \cdot 10^{-6}$	0,514
5. Շինարարական աշխատանքներ (էքսկավատոր)	0,012							0,012
6.Շինարարական աշխատանքներ (բուլդոզեր)	0,0034							0,0034
Ընդամենը	0,3054	0,075	0,05	0,25	0,1	0,039	$0.8 \cdot 10^{-6}$	0,8194

6.1.1 Մթնոլորտի աղտոտվածության սպասվելիք մակարդակները շինարարության ժամանակահատվածում

Շինարարության Ժամանակահատվածում մթնոլորտ է արտանետվում 7 ինգրիդիենտ՝ 0.8194 տ քանակի:

Հաշվարկներով որոշված են մթնոլորտ արտանետվող հիմնական վնասակար նյութերի միջին օրական արտանետումների քանակը, որի հիման վրա կատարված է մթնոլորտի մերձգետնյա շերտում աղտոտվածության մակարդակների կանխատեսում: Արդյունքները բերված են աղյուսակ 6.7-ում: [8]

Շինարարության Ժամանակահատվածում մթնոլորտի աղտոտվածության մակարդակների կանխատեսում

Աղյուսակ 6.7

Վնասակար նյութերի անվանումը	Մթնոլորտ արտանետումների քանակը տ/օր	ՍԹԿ բնակելի գոտու համար մգ/մ^3	Վնասակար նյութերի սպասվելիք կոնցենտրացիաները բնակելի գոտու համար	
			մգ/մ^3	ԱԹԿ միավոր
1. Փոշի	0.0061	0.5	0.0051	0.01
2. Ծծմբային անհիդրիդ	0.001	0.5	0.0000012	0.0000024
3. Ածխածնի օքսիդ	0.005	5.0	3.59	0.72
4. Ազոտի օքսիդներ	0.002	0.2	0.002	0.01

Ինչպես երևում է աղյուսակից, հիմնական վնասակար նյութերի համար աղտոտվածության մակարդակները գտնվում են բնակելի գոտու համար սահմանված նորմաներում: Հարկա է նշել, որ ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ և տեվում է մինչև շինարարության ավարտը:

6.1.2. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) հնարավոր են վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների բարձրացումներ ցրման վատացման հաշվին:

Շինարարության կարգավարի կողմից սպասարկող անձնակազմին տրվում են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առաջացման հնարավորության մասին տեղեկություններ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում պետք է իրականացվեն ներքոհիշյալ միջոցառումներիծրագրերը՝

- հողային աշխատանքների ժամանակավոր դադարեցում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների տևական գործողությունների և կատարված միջոցառումների անբավարարության դեպքում անհրաժեշտ է դադարեցնել շինարարական աշխատանքները:

6.1.3. Տնտեսական վնասը

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով:

Շինարարության ժամանակահատվածում ազդեցությունը լինում է միայն մթնոլորտային օդի վրա, որի տնտեսական վնասը հաշվարկվում է ըստ գործող մեթոդակարգի

$$Ա_i = Շ_գ \cdot Ф_g \cdot Վ_i \cdot Ք_i,$$

որտեղ՝ Ա - ազդեցությունն է՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

$Շ_գ$ - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որը վերցվում է համաձայն նշված կարգի 9 աղյուսակի,

$Ф_g$ - փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն՝ $Ф_g$ = 1000 դրամ,

$Վ_i$ - i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10 և 11-րդ կետերի,

$Ք_i$ - տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$Ք_i = գ \cdot SU_i,$$

որտեղ՝ $S_{ա i}$ - i-րդ նյութի տարեկան փաստացի արտանետման քանակն է, տոննա

գ - գործակից է,

գ = 1՝ անշարժ աղբյուրների համար,

գ = 3՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

Շինարարության ժամանակ արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 6.7-ում:

Ինչպես երևում է 6.7 աղյուսակից, գործարանի շահագործման հետևանքով աղտոտող նյութերի արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան ≈823.2 հազ. դրամ:

Ներկայացված գումարը չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն:

Տնտեսական վնասի հաշվարկը

Աղյուսակ 6.8

Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի			$Վ_i$	$σ_գ$	Տնտեսական վնասը, ՀՀ դրամ
	S_i	գ	$Ք_i = S_i \cdot գ$			$Ա = 1000 \cdot σ_գ \cdot Վ_i \cdot Ք_i$
1	2	3	4	5	6	7
1. Փոշի	0.3054	1	0.3054	10	0.1	305.4
2. Ածխաջրածիններ	0.075	1	0.075	3	0.1	22.5
3. Ծծմբային անհիդրիդ	0.05	1	0.05	16.5	0.1	82.5
4. Ածխածնի օքսիդ	0.25	1	0.25	1	0.1	25
5. Ազոտի օքսիդ	0.1	1	0.1	12.5	0.1	125
6.Մուր	0.039	1	0.039	41.5	0.1	162
7.Բենզա պիրին	$0.8 \cdot 10^{6}$	1	$0.8 \cdot 10^{6}$	$12.6 \cdot 10^{5}$	0.1	100.8
ԸՆԴԱՄԵՆԸ						823.2

6.2. Ջրապահանջը շինարարության ժամանակ

Խմելու կարիքներ

Աշխատողների խմելու կարիքների համար օգտագործվելու է բերովի ջուր: Պահանջվող խմելու ջրի քանակը 11 աշխատակիցների համար հաշվարկվում է ըստ բանաձևի(9)՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

Դաշտային աշխատանքների պայմաններում միայն խմելու կարիքների համար ջրի ցածսը կկազմի՝

N - ինժիներատեխնիկական աշխատողների համար՝ - 0.002մ^3 ,

N_1 - բանվորների համար՝ - 0.003մ^3 /մարդ օր

n_1 - բանվորների թիվն է,

T-աշխատանքային օրերի առավելագույն թիվն ամբողջ շինարարության ժամանակ՝ 7 ամիս՝ 175 օր:

Այսպիսով.

$W = (1 \times 0.002 + 10 \times 0.003) \times 175 = 5,6$ մ^3 /շին.ժամ,

Ջրի ծախսը շինարարության ժամանակահատվածում …5,6 մ^3

Օրական ջրի ծախսը ……0,032 մ^3

Ժամային ջրի ծախսը … …… 0,0036 մ^3 /ժամ . կամ 3,6լ/ժամ

Սանիտարական կարիքներ

Հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները կրճատելու նպատակով չոր եղանակների իրականացվելու շինհրապարակների ջրցանում:

Ջրցանման համար ջրի ծախսը կկազմի՝

$W^{օր} = n \cdot S \cdot t_{,} ;\ W = w^{օր} \cdot T_{,}$ որտեղ

$W^{օր}$ - օրեկան ջրի ծախսը ջրցանման համար….$մ^3$

n—1,0 $մ^2$ մակերեսի համար ջրցանման համար ջրի ծախսը…. $մ^3/մ^2$

S – ջրցանման ընդհանուր մակերեսը…… $մ^2$

$t_{,}$ - ջրցանման հաճախականությունը

T - ջրցանման օրերի քանակը……օր

Ջրցանման մակերսը յուրաքանչուր հենարանի տակ 50 $մ^2$ է

Ենթակայանի ջրցանման եթակա մակերեսը մակերեսը 500 $մ^2$ է

Ընդհանուր ջրցանման եթակա մակերեսը S =600,0 $մ^2$ է

1$մ^2$ գրունտային տարածքի ջրցանման համար նորման 0,005 -0,015 $մ^3$ է: Հաշվի առնելով տարածքի կլիմայական պայմանները վերցնում ենք առավելագույնը 0,015$մ^3/մ^2$, կամ 15լ/$մ^2$:

Ջրցանման հաճաղականությունը օրը 1 անգամ, ջրցանման օրերի քանակը առանց տեղումների շինարարության ժամանակ -120 օր

$W^{օր}$=0,015 x 600 x 1 x120 = 1080 $մ^3$ / շին ժամ

Օգտագործվելու է բերովի տենիկական ջուր:

6.3 Հողային աշխատանքներ.

Կայանի կառուցման ժամանակ կատարվելու են՝ հիմքերի, հենարանների ֆունդամենտի տակ նախատեսվող պատրաստական աշխատանքներ:

Հողային աշխատանքներ իրականացնելու արդյունքում հանվելու է 1 039$մ^3$ հողային զանգված, որից 460$մ^3$ հետլիցք: Մնացած՝ 459$մ^3$ գրունտը օգտագործվելու է ենթակայանի տարածքի փոսորակների լցման և հարթեցման համար: Հողային աշխատանքներից առաջացած բերրի հողը՝ 120$մ^3$ հանվելուց հետո ամբողջությամբ օգտագործվելու է եթակայանի տարածքի կանաչապատման համար:

Շինարարության ժամանակ առաջանալու են միայն փոշու արտանետումներ, որոնք կրելու են ժամանակավոր բնույթ:

6.4. Շինարարության փուլում առաջացած թափոնները

Շինարարության փուլում առաջանալու են հետևյալ թափոններ.

- կենցաղային աղբ՝ 9120040001004 – 480կգ

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվել է ըստ նորմի և աշխատողների թվի.

11 x 0,3 x 0,25=0,825տ/տ,

0.825/12 x 7 = 0,48տ շինարարության ընթացքում:

Կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբամանների մեջ (տարածքում տեղադրվելու է 3 աղբաման) և տեղափոխվելու է գյուղի աղբավայր:

6.5. Բնապահպանական միջոցառումներ շինարարական փուլում

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կրում է ժամանակավոր բնույթ, որի տևողությունը կախված է շինարարության տևողությունից:

Շինարարության ժամանակ նախատեսվում են հետևալ բնապահպանական միջոցառումները.

1. Հողային աշխատանքները նախատեսվում է իրականցնել փոքրագաբարիտ տեխնիկայի օգնությամբ, ինչի արդյունքում շարժիչների աշխատանքից գազերի և հողային աշխատանքներից փոշու արտանետումները զգալի կկրճատվեն
2. Արդիական փոքրագաբարիտ տեխնիկաների վրա տեղադրված են կատալիզատորներ, ինչը, մոտ 50-60% կրճատում է արտանետվող գազերում աղտոտող նյութերի պարունակությունը
3. Փոքրագաբարիտային տեխնիկայի համար պետք չեն հատուկ լայն մոտեցնող ճանապարհներ դեպի հենարաններ:
4. Տեղում չի նախատեսվում բետոնի շաղախի պատրաստում հիմքերի կառուցման համար, բացի այդ բետոնյա կոնստրուկցիաները բերվելու են պատրաստի:
5. Փոշեգոյացումը նվազացնելու նպատակով նախատեսվում է չոր և շոգ եղանակներին իրականացնել ջրցանում:
6. Հանվող գրունտների մեծ մասը օգտագործվելու է որպես հետլիցք, մյուս մասը փոսորակների լցման և տարածքի հարթեցման համար:
7. Շինարարության ժամանակ հանված հողի բերրի շերտը ամբողջությամբ օգտագործվելու է եթակայանի տարածքի կանաչապատման համար:

<u>Հակավթարային միջոցառումներ շինմոնտաժային աշխատանքների ժամանակ</u>

1. Բոլոր շինարարները և հավաքակցորդները պետք է ապահովված լինեն տվյալ աշխատանքի համար անհրաժետ արտահագուստով, սաղավարտով, ակնոցներով:
2. Շինարարական և մոնտաժային աշխատանքները իրականացնել համաձայն գործող անվտանգության հրահանգների և կանոնների:
3. Մինչև 18 տարեկան երեխաներին արգելվում է մոնտաժային աշխատանքներին ներգրավումը:

Մոնիտորիգ և բնապահպանական կառավարման պլան շինաշխատանքների ժամանակահատվածում

Աղյուսակ 6.9

Վայրը/ գործողու-թյունը/փուլը	Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի փուլը	Գործիքները և մեթոդները	Բնապահպանական միջոցառումների իրականացման ինդիկատորները	Պատասխանա տու մարմինները	Հաճախակա-նությունը և ժամանակը
Ֆունդամենտների կառուցում	Փոշի արտանետումներ	Հողային աշխատանքներ	Ասպիրացիոն սարք, կշռային	շինհրապարակների	կապալառու	չոր, շոգ եղանակներին
Թափոնների կառավարում և հեռացում	Կոշտ թափոններ, կենցաղային աղբ և այլն	Կուտակման համար սահմանված տեղամասեր և պահեստներ	Տեսողական զննում	Աղբարկղների տղաղրում և տարածքներից դուրս բերում	կապալառու	եռամսյակը մեկ
Շինհրապարակների տարածք	Հողի բերի շերտի հանում,	շինհրապարակ	Տեսողական զննում,	Հողի պահպանում, հետագա օգտագործման հար	կապալառու	Հողային աշխատանքների ժամանակ
Հարակից տարածքներ	Շինհրապարակից դուրս տարածքներ	Տարածքների աղտոտում	Տեսողական զննում	Արգելել հարակից տարածքների խախտում, աղտոտում	կապալառու	պարբերաբար

7.Շահագործման փուլ

Ենթակայանի շահագործումն իրականացվելու է հեռահար, մեկ օպերատորի կողմից;

8.Հակավթարային միջոցառումներ

1. 110կՎ Ենթակայանի շանթապաշտպանությունը ապահովվում է պորտալների վրա տեղադրած շանթարգելներով:
2. Ենթակայանի սարքավորումները արտաքին գերլարումներից պաշտպանելու համար 110 և 10կՎ ներանցիչների վրա տեղադրվում են պարպիչներ: ՕԳ-ի շանթապաշտպանությունը նախատեսված է 110կՎ ԵԿ-ի մուտքի պորտալից մինչև N2 հենարանի հատվածում՝ C-50 տիպի ճոպանով:
3. Տրանսֆորմատորի վթարման դեպքում յուղի տարհոսման և հրդեհի տարածման կանխման համար նախատեսվախ է յուղահավաք հոր:
4. ԵԿ-ի հողանցման համար նրա շուրջը նախատեսվում է ստեղծել հողանցման եզրագիծ, որին ոչ պակաս, քան երկու կետում պետք է միացնել ենթակայանի սարքավորումների մետսղական իրանները: Հողակցման եզրագիծն իրականացվում է 4x40 շերտապողպատից (հորիզոնական հողանցիչ) և 2.5մ երկարությամբ 50x50x5մմ անկյունային պողպատից (ուղղահայաց էլեկտրոդ):
5. Համաձայն ԷՄՆԸՊ ՏԿ-ի VI գլխի 33-րդ կետի Ենթակայանի հողակցման սարքի դիմադրությունը տարվա ցանկացած եղանակին չպետք է գերազանցի 0.5 Օհմ-ից: Հողանցման կոնտուրի մոնտաժումից հետո անհրաժեշտ է ստուգել հողանցման սարքավորման դիմադրությունը: Չբավարարելու դեպքում ավելացնել էլեկտրդների քանակը նորմային հասցնելու համար:
6. Եթակայանի տարածքը նախատեվում է ամբողջ պարագծով ցանկապատել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Геология Армянской ССР. Том YIII. Гидрогеология. Ереван: исд-во АН Арм.ССР, 1974.–392 с.
2. Почвенный кадастр РА. Фонд института “Армгипрозем”, 1997 г.
3. ՀՀՇՆ 40.01.01-2014,
4. Արարատի մարզի Երասխ համայնքի էլեկտրոնային անձնագիր, 2017թ.
5. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов. Новороссийск 1985г.
6. Методика расчета вредних выбросов (сбросов) для комплекса оборудования открытых горных работ (на основе) удельных показателей Люберцы 1999г.
7. Методика расчета выбросов загрязняюших веществ в атмасферу от предприятий по произвотству строительных материалов, Казахстан 2008
8. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы. Обнинск 1984г.
9. «Ջրամատակարարում: Արտաքին ցանցեր և կառուցվածքներ», ՇՆԿ 2.04-02-84

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Իրադրային հատակագիծ





Պայմանական նշաններ

նախագծվող միաշղթա 110կՎ ՕԳ

նոր տեղադրվող միաշղթա 110կՎ հենարան

գոյություն ունեցող 110կՎ երկշղթա ՕԳ

նախագծվող 10կՎ ստորգետնյա ՄԳ

ջրատար խողովակ

ՈՒՂԵԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է

NN	Կազմակերպության անունը	Ստորագրություն	Անուն Ազգանուն	Ամսաթիվ
1	Արարատ համայնքի Ղեկավար			
2	Երասխ համայնքի Ղեկավար			
3	«ՀԷՑ» ՓԲԸ Տեխնիկական տնօրեն	[illegible]	Ա. [illegible]	1.09.2022
4	«ՀԷՑ» ՓԲԸ ԱՐԱՐԱՏ Մ/Ճ	[illegible]	Ի. ԳՐԻԳՈՐՅԱՆ	
5	«ՎԵՈԼԱ ՋՈՒՐ» ՓԲԸ	[illegible]	[illegible]	21.08.22թ
6	«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ			
7	«...ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	[illegible]	[illegible]	[illegible]
8		[illegible]	[illegible]	[illegible]
9		[illegible]	[illegible]	[illegible]



						ԴԷ-071-22-Հ1-ԵԿ-04			
փոփ	մասն.	թերթ	փաստ	ստորագր	ամսաթ	ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Երասխ գյուղում «Ջի Թի Բի ՍԹԻԼ» ՍՊԸ-ի կողմից կառուցվող 25000կՎԱ հզորության ենթակայանի նախագիծ: 110/10կՎ ԵԿ-ի կառուցում:			
						Էլեկտրատեխնիկական մաս	Փուլ	Թերթ	Թերթեր
Նախ. ղեկ.		Ա. Ղպլաքյան					Ան	04	18
Նախագծող		Ա. Հովսեփյան				110/10կՎ ԵԿ Կտրվածք 1-1 110/10kV SS Section 1-1	«Դի-ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ ք.Երևան 2022թ.		


ՀԱՏԱԿԱԳԻԾ
LAYOUT of fence
Մ 1 : 1000
110կՎ ԲԲԱ
110kV Open Dist. Area
10կՎ ՓԲՍ CLOSE DISTRIBUTION PANEL
7000
9120
9000
3500
16000
31000
3000
2000
ԴԷ-071-22-Հ1-ՇՄ-20
ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Երասխ գյուղում «Ջի Թի Բի ՍԹԻԼ» ՍՊԸ-ի կողմից կառուցվող 25000կՎԱ հզորության ենթակայանի նախագիծ:
110/10կՎ ԵԿ-ի կառուցում:
փոփ | մասն. | թերթ | փաստ | ստորագր | ամսաթ
Նախ. ղեկ. | Ա. Ղալաչյան
Նախագծող | Ա. Հովսեփյան
Շինարարական մաս
Փուլ | Թերթ | Թերթեր
ԱՆ | 20 | 24
Ցանկապատի հատակագիծ
Մ 1:100
Layout of the fence
«ԴԻ-ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
ք.Երևան 2022թ.

Հավելված 5.

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

		ԶՆ 1
Սեփականատեր	Արարատ, գյուղ Երասխ	Հաստատում եմ 19.10.2022թ.
ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔ	Մարզ, համայնք, հասցե	Համայնքի ղեկավար Կ.Տ.
	Հողահատկացման հիմքը	Կնիք, ազգանուն, հայրանուն



Հողամասի

Մակերես հա	0.04960
Ծածկագիր	03-042-0210-0001-հց
Նպատակային նշանակություն	Գյուղատնտեսական հողեր
Գործառնական նշանակություն	Այլ հողատեսք

Լրացուցիչ նշումներ.

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատները Y	Կոորդինատները X	Գծային չափեր
1	8486212.2361	4400712.0809	
			16.00
2	8486210.9053	4400728.0254	
			31.00
3	8486241.7979	4400730.6039	
			16.00
4	8486243.1287	4400714.6594	
			31.00
1	8486212.2361	4400712.0809	

Մասշտաբ 1:500

Որակավորում ունեցող անձ		Արմեն Դավթյան
Որակավորման վկայականի համարը		367
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		ԱՁ Արմեն Դավթյան
ՀՎՀՀ		23219693
Ստորագրություն		
ամիս ամսաթիվ	չափագրության	10.10.2022
ամիս ամսաթիվ	հատակագծի կազմման	17.10.2022